ԾՈՎԻՆԱՐԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի թաքավոր ա ըլըմ, կնիկ ա ուզըմ, էդ կնիկը ըրեխա չի բերըմ։ Օխտը տարին անց ա կենըմ, վրա օխտը տարին մի դարվիշ ա գալի, թաքավորի դռանը կանգնըմ ա, ասըմ ա.— Թաքավորն ապրած կենա, ես գիդեմ, թե քո քեփը խի ա խարաբ։
Ասըմ ա.— Խի՞ ա խարաբ, դարվիշ բաբա։
Ասըմ ա.— Նրա համար, որ կնիկդ ըրեխա չի բերըմ, մադյանն էլ՝ քուռակ։
Ասըմ ա.— Դարվիշ բաբա, որ դու տհենց իմաստուն ես, դրա հնարն էլ կգիդենաս, բա ո՞նց կլի դրա ճարը։
Ասըմ ա.— Թաքավորն ապրած կենա, քու բաղըմը մի խնձորըքի կա, էս օխտը տարի ա՝ բար չի տալի, հմի նոր մինը բռնել ա, գնա բի կլպե, մեչը կնգանըդ տուր, կլպնին էլ մադյանիդ, թող ուտեն, իրանց վախտին կնիկդ մի տղա կբերե, օխտը տարեն ղսըր մադյանդ էլ՝ մի քուռակ։
Տղիդ անըմը կդնես Նհար, քուռակինը՝ Բհար։
Էդ ասելուն հադաղ դավրիշը բաթմիշ ա ըլըմ։
Թաքավորը գնըմ ա բաղը, տենըմ ա, որ դրուստ հրես մի ծառի վրա մենակ մի խնձոր կա։ Ոնց որ դարվիշն ասել էր, նհենց էլ անըմ ա։
Կնգա վադեն թմամվըմ ա, ազատվըմ ա, մի սիրուն տղա յա բերըմ, ձիու վագեն էլ թըմամվըմ ա, ցնգնըմ ա, մի սիրուն քուռակ ա բերըմ։ Ով տարով կվենձանա, Նհարն ու Բհարն օրով են վենձանըմ։ Նհարը որ ոտնավորվըմ ա հա, գնըմ ա գոմը, ամեն օր Բհարին կորմիտ ա անըմ ու թիմարըմ։
Օրվա մի օրը Բհարը լիզու ա ըլըմ, ասըմ ա Նհար, որ տեղդ նեղվի, կգաս իմ կուշտը հարցմունքի։
Մի վախտ անց ա կենըմ, Նհարն էլ հասած տղա յա դառնըմ, մի ղափիլ ծակուն ա ըլըմ, շանջուն ջիգարն ա տալի։ Կուչ ու հուփ գալով հասնըմ ա գոմը, ասըմ ա.— Բհար ջան, ես մեռա, հնար ունիս՝ տես։
Ասըմ ա.— Վախիլ մի, աչու ձեռդ ձախ կոխկդ տար, ընդի մի խանչալ կա, հանե։
Ձեռը կոխկն ա տանըմ, դրուստ որ մի խանչալ ա հանըմ։ Խանջալի վրա տենըմ ա մի սիրուն ախչկա նկար, տակին գրած՝ Ծովինար։
Որ տենըմ ա, խելքի ծերը գնըմ ա, ցավն էլ ա մտահան անըմ, բանն էլ։
Բհարն ասըմ ա.— Հե՛, Նհար, ի՞նչ էլավ քեզ հետ։
Ասըմ ա.— Բհա՛ր, Ծովինարին ո՞րդի կգդնունք։
Ասըմ ա.— Շատ ա դժար, հմա քեփդ խարաբ մի անիլ, կգդնունք։ Գնա,— ասըմ ա,— մի հատ թամքը շինիլ տուր, բի վրես դի, փորս պինդ քաշե, վեր իլ, ես քեզ կտանիմ քո Ծովինարի կուշտը։
Նհարը գնաց մի լավ թամքը շինիլ տվուց, բերուց թամքեց, վեր էլավ, ու ընգան ճամփա։ Գնացին, գնացին, շատն ու քիչն իրանք գիդեն, գնացին մի սև երգրի ըռաստ էկան, տեհան ամեն բանն էլ սև ա։ Մին էլ տեհան մի սև ձիավոր դուս էկավ ու դրանց ճամփեն կտրեց ու հարցրուց.— Ո՞ւր եք գնըմ, սա իմ երգիրն ա, ի՞նչ իրավունքով եք մտել իմ ֆոդը։
Ասավ ու թուրը հանեց, վրա բերուց նհարին։ Նրա վրա բերելնու հադաղ Բհարը ծուլ էլավ, երգնքի ծերը հասավ, թուրը մնին էլա դիբավ ոչ։
Բհարն ասավ.— Նհա՛ր, վախիլ մի, դու սրան զոռիլ տիս, հմա սպանես ոչ, սա քու ախպերը կդառնա։

Նհարն ասավ.— Է՛, ախպերացու, քու թուրն ինձ բան չի անիլ, ես էլ թուր ունիմ։
Ասելուն պես խանջալը կոխկիցը հանեց թե չէ՝ շոխկն ընգավ էդ երգրի վրա, սև մարթի աչկերը փագեց։ Եդ խանջալը տեղը դրուց, սև մարթը մոդ էկավ, բարըշեցին, դառան իրար ախպերացու ու գնացին։ Գնացին տեհան էդ սև երգրի ծերին իրեք ախպեր մի ղրաղին են կռվըմ, մի ղոշուն՝ մի ղրաղին։ Բհարին պահ տվուց սև ախպորը, ինքն աղաք գնաց։
Ասավ.— Թե շատի կուռն ընգնիմ, կասեն՝ «վախլուկ ա», լավն էն ա իրեքի կուռն ընգնիմ։
Անց կացավ իրեքի կուռն ու ղոշունի մի ղրաղից սրփեց, մեկել ղրաղին դուս էկավ։ Էն կռվող իրեք ախպոր բերանը բաց էր մնացել, մնացել էին կաղնած։ Որ կռիվը պրծավ հա, իրեքն էլ էկան դրան գլուխ տվին, տարան իրանց տուն, իրանց հորը վասմուհալն ասին։ Հերներուն թաքավոր էր։
Ասավ.— Չէ՛, կաս, կաս ոչ, իմ փեսեն տիս դառնալ։
Ախչկանը որ տեհավ, թաքուն ասավ.— Իմ մուրազն էն ա, որ ձեր ախչըկանը տաք իմ ախպորը։
Դրանք ռազի էլան, ախպորը կանչեցին, հրսանիք արին, օխտն օր, օխտը քշեր հրսանիքը քաշեց։
Վրա օխտն օրը նհարը մատնուքը հանեց իրա աչու ձեռի մատիցն ու տվուց սև ախպորը, ասավ.— Քեզ թող եմ անըմ քու քեփը քաշե, ես գնըմ եմ, որ վախտն էդ մատնուքը կսևանա, իմ տեղը նեղ ա, հասի իմ հավարին։
Բհարին նստեց, եդ ճամփա ընգան ու գնացին։ Գնացին, գնացին, եդ շատն ու քիչն իրանք գիդեն, գնացին հասան հմի էլ մի սպիտակ երգիր։ Էդ երգրումըն էլ ամեն բանը սպիտակ էր։ Հմի էլ մի սպիտակ ձիավոր ա դրանց աղաքը կտրըմ։ Եդ նհե կռվըմ են, ախպերանըմ են Վերչը, աղաք գնըմ։ Եդ նհե ջհըմ են մի ուրիշ իրեք ախպոր ու ղոշունի կռվի։ Եդ իրեք ախպոր կուռն ա ընգնըմ Նհարը, ղոշունին զոռըմ, գլուխդ ինչ ցվացնեմ, վերչն էդ իրեք ախպոր քվորն էլ հրսանիք ա անըմ սպիտակ ախպոր հետ, ձախու ձեռի մատնուքն էլ դրան ա տալի, թամբահ անըմ, որ՝ որ վախտը խըվարի՝ հավարին հասնի։ Ինքը Բհարին նստըմ ա, ընգնըմ ճամփա։ Գնըմ են, գնըմ եդ, շատն ու քիչն իրանք գիդեն, հասնըմ են հմի էլ մի կանանչ երգիր։ Էդ երգրումն էլ ամեն բան կանանչ ա։
Ըտի էլ մի կանանչ ձիավոր ա դուս գալիս, եդ նրանց վասմահալի պես ախպերանըմ ա հետը, եդ ջհըմ են՝ մի ուրիշ իրեք ախպոր ու ղոշունի կռվի, զոռըմ ա ղոշունին, իրեք ախպոր քվորն էլ տալիս ա կանանչ ախպորը, իրա ոսկե քամարը տալիս ա կանանչ ախպորը, թամբահ ա անըմ— որ սևանա՝ իրան հավարին հասնի։ Ինքը եդ վեր ա ըլըմ Բհարին, ընգնըմ ճամփա։
Ասավ.— Բհար ջա՛ն, բա հմի՞ ոնց տինք անիլ։
Ասավ.— Կարմիր երգրըմը մի ծով կա, էդ ծովի միչին մի պալատ կա, Ծովինարն էդ պալատըմն ա, նրա հմար ծովի ղրաղին վենձ կռիվ ա, կգնանք կզոռենք, քեզ կհասցնեմ քու Ծովինարի կուշտը։
Էկան տեհան մի ղոշուն մի ղրաղին ա կռվըմ, իրեք ասլան էլ մի ղրաղին, էդ ասլաննին թող չեն անըմ, որ ղոշունը ծովին մոտ կա։ Բհարին ճիպտեց, էդ ղոշունի մի ղրաղից կտորելով՝ մեկել ղրաղին դուս արավ։ Ուզեց մոտ գա ծովին— ասլաննին թողին ոչ։ Օրը որ մթնեց, ասլաննին գնացին դինջանալու։
Բհարն ասավ.— Դրանց հետ կարալ չենք կռվիլ, ամենադժար տեղն ենք հասել, ամեն քշեր գնա մնին սպանե, արի։
Նհարը գնաց քշերը մնին սպանեց, լիսաբաշտեն եդ էկավ։ Եդ մութն ընգավ, գնաց մնին էլ սպանեց, լիսաբաշտեն էկավ, էքսի քշերն էլ մնին սպանեց, լիսաբաշտեն որ երգիրը կարմրին

տվուց հա, վեր էլավ Բհարին, թոցրուց ծովի վրովը, գնաց Ծովինարի պալատի դռանը վեր էկավ։
Բհարն ասավ.— Դե գնա, որդի փագ դուռ տենաս խանջալդ դեմ արա՝ բաց կլի։
Գնաց մտավ պալատը, որդի փագ դուռ ջհեց, խանջալը դեմ արավ թե չէ՝ բաց էլավ։ Գնաց մի օթախ մտավ որ՝ կարմրութենի շոխկն աչկերը ծակեց։ Տեհավ մի սիրուն ախչիկ նստած, հենց իրա խանջալի վրի նկարն ա որ կա։ Ծովինարը տեղիցը վեր կացավ ու էկավ՝ իրար շլնքով ընգան։
Ասավ.— Նամարդ, ասլաննին քեզ կծիլ չէին, խի՞ սպանեիր, նրանք մեզ կպահեին, դուշմանին մոտ չէին թողուլ, հմի որ ասլաննու հետ կռվող ղոշունի թաքավորն իմանա, որ ասլաննուն սպանել ես, գալ տի եդ ինձ փախցնելու։
Ասավ.— Արխեին մնա, օչով կարալ չի քու մազին դիպչի։ Մխելի վախտ անց կացավ, կարմիր երգրի թաքավորն իմացավ, որ ասլաննին էլ կան ոչ, ղոշուն հվաքեց ու էկավ ծովի ղրաղին չադիր վեր թողուց, հմա Նհարի ահիցը կարաց ոչ ծովն անց կենա։
Մի ջադուքար պառավ գալիս ա ասըմ.— Իմ քաշով մին ոսկի տուր, մին էլ մի սիրուն խնոցի շինե, ինձ տուր՝ ես գնամ Ծովինարին գողանամ բերեմ։
Ոսկին էլ տվուց, խնոցին էլ, պառավին ղրգեց։ Պառավը խնոցուն վեր ա ըլըմ, գալի հասնըմ պալատին։ Էդ վախտը Նհարը ֆորսի գնացած ա ըլըմ։ Գալիս ա պառավը, դուռը բաց անըմ, մտնըմ նի։ Ծովինարը մենակ նստած կար անելիս ա ըլըմ, դրան տենըմ ա թե չէ, փետը քաշըմ ա՝ դուս անըմ։
Դա ղանչանք ա անըմ, ասըմ ա.— Անդեր պառավ եմ, ինձ մի տեղ տուր կենամ, ձեր տունը կավլեմ, ձեր ոտները կլվանամ, խորակը կեփեմ։
Ինչքան ղանչանք ա անըմ, Ծովինարը բանի տեղ չի դնըմ, դուս ա անըմ։ Նհարի ֆորսիցը եդ գալու վախտը գնըմ ա պատի տակին կուչ գալի, մթամ թե լաց ա ըլըմ։ Նհարը գալիս ա թե չէ, հմի էլ նրան ա ղանչանք անըմ։ Որ էդ պատառոտված շորերըմ տենըմ ա հա, մեխկը գալիս ա, ձեռիցը բռնըմ ա, տանըմ տուն։
Ծովինարն ասըմ ա.— Դրանից մեզ վնաս կգա, դուս արա կորչի։
Ասըմ ա.— Մի բան էլա ըլիլ չի, քյասիբ պառավ ա, թող մի կտոր հաց ուտե, իրա համար ապրի։ Նա՝ հա, նա՝ չէ, վերջը թողըմ են։
Դա ղոչաղութին ա անըմ, շըփշըփըմ ա, դրանց աչկին դիր ա գալի, դրան բերըմ են թազա շորեր հաքցնըմ, իրանց հետ ուտացնըմ, խմացնըմ, պիրմ։
Մի օր Նհարը գնըմ ա ֆորսի, պառավը մտնըմ ա Ծովինարի տամարը, ասըմ ա.— Դու որ էդքան մարթիդ սիրըմ ես, խի՞ չես հարցընըմ, թե դրա հունարն ընչումն ա, որ էդքան ղոշունի շփլթուն կտրեց։
Ըրիգունը մութն ընգնըմ ա, քնելու վախտը գնըմ ա մտնըմ դրանց կրավաթի տակը։
Ծովինարը Նհարի եխեն կտրըմ ա, թե.— Քու հունարն ընչո՞ւմն ա։
Ասըմ ա.— Իմ հունարն իմ խանջալըմն ա։
Պառավն կրավաթի տակիցն իմանըմ ա, հլե դրանք քնըմ են թե չէ, դուս ա գալի, խանջալը ծոցիցը հանըմ ա, գձըմ ծովը։ Որ ծովն ա գձըմ Հա, Նհարը կիսամեռ ա դառնըմ։ Ըռավոդը Ծովինարը հե գիդենըմ ա՝ քնած ա։ Ինքը դուս ա գալի դուռը, ծովին թմաշա անըմ։
Պառավը ստանութին ա անըմ, ասըմ ա.— Արի գնանք ծովի ղրաղին մի քիչ ման գանք։
Սեհըրն անելով, տանըմ ա իրա խնոցու կուշտը հասցնըմ։
Ծովինարը որ հուրհրատին տալով խնոցին տենըմ ա, ասըմ ա.— Էս ի՞նչ ա սհե սիրուն։
Ասըմ ա.— Հլա գնանք տենանք։
Տանըմ ա միչին նստացնըմ, ասըմ ա.— Ա՛ խնոցի, քեզ որդի տենամ՝ ծովի ղրաղին։

Հլե չկելն աչկներուն բաց ու խուփ են անըմ, մին էլ տենըմ են ծովի ղրաղին են։
Թաքավորն աղաք ա գալի, ուզում ա մոտ գա, Ծովինարը մոտ չի թողըմ, ասըմ ա.— Չկելը քառասուն օրը թմամվի ոչ, ես մարթ չեմ կուշտս թողուլ։
Տհենց դրանց թողունք, հարց տանք Նհարից։ Ախպորտանց մատնուքը մատին ա հուպ տալի, մնին էլ՝ քամարը, մտիկ են անըմ տենըմ, որ սևացել են։ Գալիս են ընդի հասնըմ, տենըմ, որ Բհարը գեդինը փորըմ ա, ֆողը ոտով գլխին ածըմ, քրդնքըմ տրաքըմ։
Ասըմ են.— Բհար ջան, ի՞նչ անենք։
Ասըմ ա.— Պառավը Նհարի խանջալը վրա արավ, յա ծովն ա ընգել, յա աստղերին ա հասել, յա ցամաքն ա ընգել։
Սպիտակ ձիավոր ախպորն ասըմ ա.— Դու գնա աստղերին ժողով արա, Կանանչին էլ ասըմ ա.— Դու ձիդ քշե, ընգի ցամաքը, ժողով արա ամեն ֆոքավորի։ Սևին էլ ասըմ ա.— Դուն էլ ձիդ քշե ծովի տակը, ժողով արա ձկներին, հարց էլեք, տեհեք ում կշտին ա, խանջալը բերեք, Նհարին ուշկի բերեք։
Ասելու հադաղ Սպիտակը երկինքն ա բըցրանըմ, Կանանչը՝ ցամաքը գնըմ, Սևն էլ՝ ծովի տակը։ Գնըմ ա ծովի ձկներին թոփ անըմ ժողովի, տենըմ ա խանջալը մնի կշտին էլ ա կա ոչ։
Ասըմ ա.— Բա էլ ձուգը չի կա՞։
Ասըմ են.— Մինը հիվանդ ա։
Ասըմ ա.— Ես դրան կսաղացնեմ, բերեք։
Բերըմ են, տենըմ ա, խանջալը միչկըմը թաղված։ Քաշըմ ա հանըմ, միչկի փշերը չիմ խանջալի հետ դուս են գալի։
Ասըմ ա.— Դու կսաղանաս ու կդառնաս էս ձգների իշխանը։
Չկել ըսօր էլ էտ ձգանն իշխան են ասըմ։
Էտա խանջալը ձեռին գալիս ա, գալիս ա տենըմ զաթի էն մեկել ախպերտինքը դառդակ են եկել։ Խանջալը դնըմ են Նհարի կոխկին թե չէ՝ զարթնըմ ա։
Ասըմ են.— Բա էս ո՞նց էլավ։
Ասըմ ա.— Սհե՛-սհե՛։ Դրանք ձիանը նստըմ են, ընդի հասնըմ, որ Ծովինարի քառասուն օրը թմամվել ա, տուլին էրեսն են քաշել, ուզըմ են ժամը տանին, որ թաքավորի հետ հրսանիք անեն, Ծովինարի աչկը ճամփի ա ըլրմ, թեզ-թեզ եդ ա մտիկ անըմ ըրտասունքն աչկերին, բալի հավարին հասնին Նհարն ու Բհարը։
Հմա մտկըմը դրած ա ըլրմ, որ ժամը մտնին թե չէ, շեմքըմն էվետ դանակն իրա սրտըմը թաղե։
Մին էլ եդ ա մտիկ անըմ, տենըմ ա թոզ ու դումանը երդինքն ա կալել, էդ վախտը Սպիտակ ձիավորը ձին քշըմ ա, թաքավորի մազերիցը բռնըմ, վրա ա անըմ, տալի աստղերի ճկատովը, թիքա-թիքա անըմ։ Սև ձիավորն էլ ջադուքար պառավի մազերիցն ա բռնըմ, վրա անըմ ծովը գցըմ, ձգների փայ անըմ, Կանանչ ախպերն էլ հակալ-հակալ ընգած ռահաթին արխեինացնըմ ա, որ հե գիդեին, թե իրանց էլ տին կտորիլ։ Նհարն էլ գնըմ ա Ծովինարին փթաթվըմ։
Ասըմ ա.— Բա որ ասեի՝ ասլաննուն զուր ես սպանել։
Եդնա խալխը թոփ են ըլրմ, չիմն էլ ուրխանըմ, որ իրանց ազատել են գեշ թաքավորից, պատիվ են տալի, խաղ ու ծաղկով, ծափ ու ծիծաղով դրանց ճամփու են դնըմ, իրանք էլ իրանց գործին կենըմ։
Ախպերտինքն էլ բերըմ են Նհարին ու Ծովինարին հրսանիք անըմ, նրանք իրանց մուրազովն ուրախանըմ, դու էլ քո մուրազովն ուրախանաս։